

# Ժողովուրդ

154  
(2634)

29 հոկտեմբերի շաբաթ 2022  
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է ՄԱՍ 123



Հայաստանը սեպտեմբերի սկզբին համաձայնել է աշխատել Հայաստանի և Ադրբեջանի միջև միջպետական հարաբերությունների հաստատման ուղղությամբ ՌԴ-ի կողմից ներկայացված սկզբունքների և պարամետրերի հիման վրա, ու պատրաստ է դա վերահաստատել Սոչիում: Երեկ թվիթերյան իր միկրոբլոգում նման գրառում էր արել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Ստացվում է՝ սեպտեմբերից Հայաստանն աշխատում է ՌԴ-ի հետ, սակայն նույն ՀՀ ղեկավարության և տարբեր իշխանական գործիչների կողմից հնչում էին հակառակակողմից հայտարարություններ, ՀԱՊԿ-ից դուրս գալու կոչեր: Դրան զուգահեռ, չնայած սեպտեմբերից բանակցություններ կան, սակայն Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 6-ին նաեւ հանդիպում ունեցավ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի մասնակցությամբ: Այսինքն՝ մի կողմից բանակցում էր Ռուսաստանի հետ, մյուս կողմից ընդունեց արեւմտյան տարբերակը: Մեկ այլ հանգամանք էս. Նիկոլ Փաշինյանը, իշխանության գալով, դեռ 2018 թվականին հայտարարում էր, թե Արցախյան հարցի բանակցությունների ժամանակ և այլ հարցերում եւս միայնակ որոշում երբեք չի կայացնի և ամեն ինչ կքննարկի հայ ժողովրդի հետ: Սեպտեմբերից ռուսական կողմի հետ բանակցելն ու այդ մասին չհայտարարելը եւս մեկ անգամ ապացուցում է, որ Նիկոլ Փաշինյանը բանակցում է գաղտնի և չի կատարում իր խոստումները, հետեւաբար կրկին խաբել է ՀՀ հպարտ և արժանապատիվ քաղաքացիներին:

Հոկտեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին, տեղի կունենա Ազգային ժողովի արտահերթ նիստ և հանրահավաք: Նկատենք՝ Ստեփանակերտում տեղի ունենալիք հանրահավաքն ու ԱԽ ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ հրավիրված նիստը տեղի է ունենալու հոկտեմբերի 31-ին կայանալիք եռակողմ Նիկոլ Փաշինյան, Իլիամ Ալիև և Վլադիմիր Պուտին հանդիպումից մեկ օր առաջ և իր մեջ ակնհայտ մեսսիջներ է պարունակում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նիստից հետո կոշտ հայտարարություն է տարածվելու և Հայաստանի իշխանություններին հստակ մեսսիջ է ուղղվելու, որ Արցախի ժողովուրդը դեմ է հարցի կարգավորման ամերիկյան կամ, այսպես ասած, արեւմտյան տարբերակին: Նրանք հայտարարությամբ ամրագրելու են, թե կողմ են միայն ռուսական տարբերակին: Նկատենք՝ Վլադիմիր Պուտինը հոկտեմբերի 27-ին՝ «Վալդայ» ակումբում ելույթի ժամանակ էս նշեց. «Եթե հայ ժողովուրդը և նրա ղեկավարությունը ցանկանում է ստորագրել մի փաստաթուղթ, որով Ղարաբաղի սուվերենությունը զիջում են Ադրբեջանին, ապա դա հայ ժողովրդի և նրա իշխանության ընտրությունն է»: Եվ նաեւ այս հայտարարություններն ու անկա տարբերակներն են պատճառ դարձել, որ Արցախը որոշել է կոշտ հայտարարությամբ հանդես գալ և ներկայացնել իր տեսակետն ու հստակ ասել, որ, բացի ռուսական տարբերակից, որեւէ այլ առաջարկ իրենց համար ընդունելի չէ:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանին, Հրաչյա Հակոբյանին և Վահագն Ալեքսանյանին տեսական ժամանակ անվտանգության աշխատակիցներ են տրամադրած եղել: Նկատենք՝ նախորդ տարին խորհրդարանում բավականին թեժ էր, և պարբերաբար բախումներ էին տեղի ունենում իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների միջև: Դրանցից մեկի ժամանակ՝ 2021 թվականի օգոստոսի 25-ին, ակտիվ էր, օրինակ, ՔՊ-ական Վահագն Ալեքսանյանը, որը ոտքով հարվածեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Վահե Հակոբյանին: Մեկ այլ անգամ էլ ծեծկռտուքի ժամանակ դահլիճում այդ ամենին հետեւում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Եվ, ահա, ընդդիմության և իշխանության այս և մյուս միջադեպերից հետո ուժային կառույցները կապ են հաստատել ԱԺ ՔՊ-ական պատգամավոր, ՀՀ վարչապետի տիկնոջ եղբոր՝ Հրաչյա Հակոբյանի, ՔՊ պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանի և Վահագն Ալեքսանյանի հետ և հայտնել, որ նրանց պետք է ապահովեն անվտանգության աշխատակիցներով, ասել է թե՛ թիկնապահներ տրամադրեն: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ուժային կառույցները ՔՊ-ական պատգամավորներին բացատրել են, որ օպերատիվ տվյալներ կան, որ միգրցե որոշ անձինք փորձեն հաշվեհարդար տեսնել իրենց հետ և ծեծի ենթարկեն նրանց: Այս ամենից հետո վերոնշյալ ՔՊ-ական պատգամավորները տեսական ժամանակ անվտանգության աշխատակիցների հսկողությամբ են գնացել ցանկացած վայր և միայն մոտ մեկ ամիս առաջ են առանց թիկնապահների շրջում:



«Վիվա»-ի հիմնադիր, գործարար եղբայրներ Վիգեն և Վահե Բաղայանները ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն չեն անցել: «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը, թե ինչու նրանք բանակում չեն ծառայել, Պաշտպանության նախարարությունը հրաժարվել է ՀՀ օրենքի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Միայն փաստել են, որ եղբայրները բանակում չեն ծառայել: Այսինքն՝ առցանց շահումով խաղերի հաշվին (օնլայն կազինոների) միլիոններ աշխատող եղբայրների՝ բանակում ծառայել-չծառայելու հարցը պետությունը պաշտպանում է «օրենքի տառին համապատասխան»: Բայց հարցն ունի խիստ բարոյական կողմ. կյանքը ցույց տվեց հատկապես 44-օրյա պատերազմից հետո, որ զոհերն ու վիրավորները հիմնականում չքավոր ընտանիքների երեխաներն են, որոնց ծնողների մտքի ծայրով էլ չի կարող անցնել, որ ինչ-որ մի օր իրենց որդիներին բանակից ազատելու հնարավորություն կունենան: Իհարկե, դատելով մամուլում հրապարակված տեղեկություններից՝ Բաղայան եղբայրները Մալթայի քաղաքացիներ են, ինչից կարելի է ենթադրել, որ պարտադիր զինծառայությունից կարող էին ազատվել այլ երկրի քաղաքացի լինելու հիմքով, բայց դա թաքցվում է ՊՆ-ում գրեթե «պետական գաղտնիք»-ի նման:



ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՊԱԿԱՍ

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑՈՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՉՈՒՆԵՆ

Յոթերդ գումարման Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության նախկին ղեկավար Տիգրան Ալիխանյանը «Հողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է, որ իբրև քաղաքական թիմի հետ Եվրոմանր չունի: «Անձնական բնույթի կադեր կան իմ ընկերների հետ, բայց դրանք խիստ անձնական, այլ ոչ թե քաղաքական բնույթի են: Կուսակցության հետ որևէ առնչություն չունեմ»,- մեզ հետ զրույցում ասում է նա: Ալիխանյանի հետ «Հողովուրդ» օրաթերթը զրույց է Հայաստանի արտաքին ու ներքին գործերի նախարարության և հարակից մի շարք հարցերի շուրջ:

-Այս պահին իշխանության կողմից տարվող քաղաքականության մասին ի՞նչ կասեք:

-Ինֆորմացիայի պակաս կա, ու ասես հանրային պահանջ էլ չի ձեռավորվում այդ ինֆորմացիան բացահայտելու մասով: Ինչ-ինչ արդյունքներ են արձանագրվում, ու հայտարարվում է դրանց մասին, բայց չի նշվում, թե Հայաստանի Հանրապետությունն ինչ գնով է ձեռք բերում այդ արդյունքները: Իսկ որպեսզի գնահատենք, թե այս կամ այն, այսպես կոչված, ձեռքբերումը դրական է, բացասական է, ընդունելի, թե անընդունելի, պետք է իմանանք, թե դրանց դիմաց ՀՀ-ն ինչ է վճարում: Այս հարցերն ինֆորմացիայի պակասի հետևանքով են առաջանում, ու հետևաբար այժմ դժվար է դրանց գնահատական տալ:

-Ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք՝ պետք է հասկանալ, թե Հայաստանն ինչ է ստանում ու ինչի գնով: Աշխարհաքաղաքական զարգացումները նկատի ունեք:

-Տեսե՛ք՝ օրինակ՝ «խաղաղության պայմանագրի» մասին է խոսվում, ու դրանից ակնկալվող արդյունքը ոչ պատերազմական իրավիճակն է լինելու: Սակայն ուզում են սա նաեւ որպես ուղերձ ասել՝ Հայաստանում կան քաղաքացիներ, որ կարծում են՝



խաղաղությունը պետք է կոնկրետ գին ունենա, ու պետք է իմանանք՝ ինչի դիմաց է խաղաղություն հաստատվելու:

-Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինը, օրինակ, ասում է, որ Հայաստանը, կարծես թե, ընտրել է բանակցությունների վաշինգտոնյան մոդելը, այն է՝ Ադրբեյջանի տարածքային ամբողջականության ճանաչումը Արցախը ներառյալ:

-Այն, ինչ ասում է ՌԴ Նախագահը բանավոր մակարդակում, ինձ համար որևէ նշանակություն չունի, ու սրանով չեմ ուզում նսեմացնել իր՝ որպես քաղաքական գործչի դերակատարումը համաշխարհային քաղաքականության մեջ, այլ ուղղակի նշում իր բանավոր խոսքն ինձ համար որևէ արժեք չունի: Ինձ համար էական նշանակություն ունեն ՌԴ ռեալ գործողությունները, որոնք, առաջիկայում կերտա, արվում են, թե ոչ: Ինչ վերաբերում է Արցախի վերաբերյալ քաղաքական իշխանության դիրքորոշմանը, ապա, ըստ իս, դիրքորոշումը բացակայում է: Ոչ հստակ հայտարարվում է, որ Արցախը ճանաչում է Ադրբեյջանի մաս, ոչ էլ հստակ հայտարարում է՝ նման բան բացառվում է: Իսկ դիրքորոշում հայտնելուց առաջ պետք է նախ այդ հարցերի պատասխանն իմանալ: Եթե հանկարծ Արցախն Ադրբեյջանի մաս կազմելու որոշում կայացվի, ապա ես դրան կընդդիմախոսեմ ու կընդդիմանամ իմ ամբողջ կարողությամբ:

-Նիկոլ Փաշինյանի վարած թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականությունը Ձեզ համար ընկալելի է:

-Դեկլարատիվ մակարդակով հայտարարվում է, թե ինչ է ակնկալվում, բայց ես չեմ տեսնում ինչ ենք դրա դիմաց տվել: Օրինակ՝ Իրանի հյուպատոսության բացումը արդյոք Կապանում անվտանգության վարագոյր է, թե՛ ոչ: Դա գնահատելու համար նորից տեղեկատվություն է պետք: **Զրույցը ՍԵՎԱԿ ՎԱՐՈՂՈՍՅԱՆԸ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինը երեկ մասնակցել է «Վալդայան» ակումբի քննարկումներին և մեկնաբանել է միջազգային քաղաքական ասպարեզում տեղի ունեցող հիմնական զարգացումները:

Պատասխանելով հայ-արդրաբանական բանակցային գործընթացի մասին հայ փորձագետ Ալեքսանդր Իսկանդարյանի հարցին՝ Վլադիմիր Պուտինը նշել է, որ Ռուսաստանը հավանություն կտա Հայաստանի համար ընդունելի ցանկացած տարբերակին, սակայն իր կողմից որևէ ճնշում չի բանեցնի:

Պուտինն ընդգծեց՝ Ռուսաստանը տարիներ շարունակ երկխոսություն է վարել հայկական կողմի հետ և առաջարկել է Դարաբաղի խնդիրը կարգավորել մի տարբերակով, ըստ որի՝ Հայաստանը պետք է Ադրբեյջանին վերադարձներ 7 շրջաններից 5-ը:

Հավելենք որ հոկտեմբերի 31-ին Սոչիում պետք է հանդիպեն Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի ղեկավարները, իսկ երեկ ՀԱՊԿ-ը քննարկեց հայ-արդրաբանական սահմանային բախումների հարցով գործուղված դիտորդների գեկույցը և դրա հիման վրա Հայաստանին օգնելու ջանքերը: Եվ հետաքրքիր է, որ Պուտինի այս հայտարարությունները եղան հենց հոկտեմբերի 27-ին:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՏԱՄԻԱՆԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Թվիթեր»-ի իր միկրոբլոգում տեղեկացրել է, որ Հայաստանը սեպտեմբերի սկզբին համաձայնել է աշխատել՝ Ռուսաստանի Դաշնության կողմից ներկայացված Հայաստանի և Ադրբեյջանի միջև միջազգային հարաբերությունների հաստատման հիմնական սկզբունքների և պարամետրերի հիման վրա, և պատրաստ է դա հաստատել Սոչիում: «Հուսով եմ, որ Ռուսաստանը կաջակցի իր առաջարկներին»,- նշել է Փաշինյանը:

Հոկտեմբերի 27-ին Ռուսաստանի Նախագահ Վլադիմիր Պուտինը նշել էր, որ Ռուսաստանը պաշտպանում է Հայաստանի և Ադրբեյջանի միջև խաղաղության պայմանագրի կնքելու գաղափարը, «սակայն չի կարող ես չի պատրաստվում Հայաստանին որևէ բան թե՛ վարել»:

ԽԻՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Նախագահ Վահագն Հովակիմյանը չէր կարող հանձնաժողովի անդամ ընտրվել, այնուհետ Նախագահ դառնալ, որովհետեւ դա խիստ ապաքաղաքական մարմին է, ու այնտեղ կուսակցական անձի նշանակումն անկարելի է»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասում է սահմանադրագետ Վարդան Այվազյանն ու ավելացնում՝ Հովակիմյանն իշխող քաղաքական թիմի անդամ է, ու կուսակցությունից հրաժարվելը չի նշանակում, թե կուսակցական ղեկավարի որոշումներից կաշկանդված չի լինելու կամ դադարում է կուսակցական լինելը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ԱԴԻԲԵՋԱՆԻ ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Աժ մարդու իրավունքների դաշնագրային և հանրային հարցերի մեջական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Կանադա կասարած այցի օրջանակներում հանդիպեցինք Անկախ սենատորների խմբից սենատորներ՝ Ներին Տեստուբյան, Բյուզեի և կառավարման մեջական հանձնաժողովի նախագահ Լյուսի Մոնսիոնի և Մարդկային ռեսուրսների ենթահանձնաժողովի նախագահ Ռայմոնդ Սեինթ ժեռնենի հետ:



Ջերմ ընդունելության արժանացանք սենատորների կողմից, որոնք, ի դեպ, ֆրանկոֆոններ են: Քննարկում ծավալվեց կանանց իրավունքների, քաղաքական մասնակցության, բռնության կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ:

Գործընկերներին սահագնացեցի Ադրբեյջանի կողմից հայ կանանց խոշտանգումների, անարդկային վերաբերմունքի մասին, որով Ադրբեյջանը ոտնահարում է ոչ միայն մարդկանց հիմնարար իրավունքները, այլև միջազգային հումանիտար իրավունքի այն առանցքային դրույթները, որոնց պետությունները պարտավորվել են հետևել իրենց միջազգային հարաբերություններում:

Սենատորների ուշադրությունը իրավիճակի Ադրբեյջանի հանցավոր վարքագծի

վրա, որը ժնեյան կոնվենցիաների դրույթների ոտնահարման հերթական օրինակն է.

- Ադրբեյջանը թույլ չի տալիս իր ռազմական ագրեսիաների արդյունքում իր օկուպացրած հայկական շրջաններից դուրս բերել հայ զինծառայողների մարմինները.
- Ադրբեյջանը թույլ չի տալիս իրականացնել անհայտ կորած հայ զինծառայողների

որոնողական աշխատանքները, շրջափակված զինծառայողների դուրսբերումը.

● Ադրբեյջանը չի ապահովում իր կողմից գերեվարված հայ զինծառայողների հարեւարածումը:

Սենատորներ Լյուսի Մոնսիոն և Ռայմոնդ Սեինթ ժեռնենը հայտնեցին իրենց պատրաստակամությունը աջակցել Հայաստանին այս ծանր իրավիճակում առկա խնդիրների լուծման գործում»:







ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՎԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը Երևանի քաղաքապետարանից հետո սկսել է զբաղվել Առողջապահության նախարարության ենթակայության տակ գտնվող հիմնարկներով: Խոսքը «Ավան հոգեկան առողջության կենտրոն» եւ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ընկերությունների մասին է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Լեւ գրուպ» ընկերությունը սեպտեմբերի 7-ին հանձնաժողով է ներկայացրել տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդում հայտնելով, որ բժշկական օգնության եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բժշկական եզրակացությունը ստանալու համար գանձվում են նախկին սակագինը մի քանի անգամ ավել գերազանցող սակագներ:

Բանն այն է, որ «Լեւ գրուպ»-ին դիմած քաղաքացիները հայտնել են, որ իրենք զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար բժշկական հոգեբուժական եւ թմրաբանական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն են պահանջել վերը նշված ընկերություններից, որոնք պահանջել են վճարել նախկինում կիրառվող սակագնից մի քանի անգամ ավել գերազանցող սակագին: Եւ հանձնաժողովը կարծում է, որ «Ավան հոգեկան առողջության կենտրոն» եւ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ընկերությունների կողմից հոգեբուժական եւ թմրաբանական բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելու շրջանակներում բժշկական եզրակացությունների տրամադրման ծառայությունների մատուցման ոլորտում վարած գնային քաղաքականությունը կարող է պարունակել գերիշխող կամ մեծաշնորհ դիրքի չարաշահման հատկանիշներ: Եւ նշված ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել են վարույթ: Թե ինչ որոշում կկայացվի առաջիկայում, արդյոք առողջապահական այս կազմակերպություններին տուգանք կնշանակվի կամ նախագրուշացում կտրվի, ցույց կտա ժամանակը: Չի բացառվում, որ պարզվի նաեւ պետական հիմնարկների կողմից սահմանված բարձր սակագինը հիմնավորված է:

ՍՅՈՒՆ Ե ՅԱՄԲՈՂՈՒՄՅԱՆ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

ԳԻՐԱՆՑՈՒՄ ՄԵՆ ՊԱՏՈՒՂԱՆԻ ՄԵԶԲՈՒՆՔՈՎ

Լինել ֆինանսական եւ սեյսմոլոգիական վստահելի միջավայր՝ առաջադեպով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ. «Ամերիաբանկ»-ի թվային ՏՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՐԿՐԱՆԱԿՆԵՐԸ ԵՆ ՀԱՄԱՊԱՓԱԿԱԿ ԾՐԱԳԵՐ, ՈՐՈՇԵՅԻԳ ՄԵԼԻՆ՝ «Ամերիա բիզնես» թվային հարթակի նոր հնարավորություններին եւ հեռանկարներին ԵՐ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՐՉԻՆ ԱՍՏՎԻՐ:

2018 թվականին գործարկված «Ամերիա բիզնես» հարթակը մինչ այժմ առաջարկում էր մի շարք ծառայություններ՝ Օլիայն հաշվի բացում, Օլիայն/Մոբայլ բանկինգ եւ Օլիայն վարկավորում: Այժմ հարթակը համարվել է ԱՁ-ն օլիայն գրանցելու նոր ծառայությամբ, որն աշխատում է մեկ պատուհանի սկզբունքով:

«Մուտք գործելով Business.ameribank.am հասցեով՝ հաճախորդը կարող է առանց բանկ այցելելու անվճար գրանցել ԱՁ, բացել հաշիվ «Ամերիաբանկ»-ում, ստանալ քարտ եւ Օլիայն/Մոբայլ բանկինգ: ԱՁ գրանցելու համար հաճախորդին անհրաժեշտ է պարզապես ունենալ անձնագիր եւ սոցքարտ կամ նույնակազման քարտ, հասանելիություն տարրաբանավորող սարքին եւ տեսախցիկով համակարգչին կամ հեռախոսին: ԱՁ-ի գրանցման գործընթացը տեւում է ընդամենը 20 րոպե», - ասաց «Ամերիաբանկ»-ի նախագծերի մենեջեր Արմինե Հարությունյանը:

«Ամերիաբանկ»-ի բիզնես բանկինգի վարչության ղեկավար Կարեն Զարամյանն իր խոսքում նշեց, որ «Ամերիա բիզնես» հարթակը ներառում է Սքորինգի եւ Մեքենայական ուսուցման վրա հիմնված օլիայն վարկավորման, SME Tablet, հաշիվ բացելու, անվճար Օլիայն/Մոբայլ բանկինգ ու բիզնես քարտ ստանալու եւ մի շարք այլ ծառայություններ, որոնք անսխալեալ են Հայաստանում: Նա ընդգծեց՝ ավտոմատ հաստատմամբ վարկավորման վրա մեծապես ազդեցություն ունեցավ հարկային շրջանառության վերաբերյալ տվյալների ստացումը:

«Սա Հայաստանում անսխալեալ է, իսկ աշխարհում շատ քիչ բանկեր կան, որոնք կարող են ավտոմատ վարկեր հաստատել հարկային շրջանառության հիման վրա: Սա մեր եւ պետական համակարգի առաջին հաջողված փորձն է «Ամերիա բիզնես» թվային հարթակի շրջանակում», - եզրափակեց Կարեն Զարամյանը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԺԱՄԱՆԱԿԱՆԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Գյուղական կյանքի եւ ավանդույթների փառասունը» Հայաստանում անցկացվում է իններորդ անգամ. այս անգամ փառասունի հովանավորներից է «ԱԿԲԱ ֆեդերացիան»:

Փառատոնի շրջանակում ներկայացված են Հայաստանի գյուղերի բարիքները, աշնանային բերքահավաքի արդյունքներն ու գյուղական խոհանոցի անկրկնելի համերը:

«ԱԿԲԱ ֆեդերացիան» փառատոնում ներկայացնում է իր գործունեությունը, «Ակբա» բանկի պրոդուկտները, ինչպես նաեւ «ԱԿԲԱ ֆեդերացիայի» հետ հա-



Աստվածի ընթացքում «Ամերիաբանկ»-ի ինովացիաների եւ թվայնացման գծով տնօրեն Արտյոմ Շամցյանն անդրադարձավ էկոհամակարգերի նախագծման մոտեցումներին:

«Մենք մտածում ենք՝ ինչպիսին է այսօր ԱՁ-ի կյանքի ցիկը, ինչպես է ԱՁ-ն մտածում, ինչ քայլերով, ինչքան ժամանակ հետո է դառնում ՍՊԸ: ՍՊԸ-ն ինչպես է աճել ու դեպի միջին, միջին+, խոշոր ընկերություն: Իսկ ի՞նչ ճանապարհով են գնում այդ ծառայությունները: Ուսումնասիրում ենք, թե ինչ ֆինանսական գործիքներ են պետք, որոնք են բիզնեսին անհրաժեշտ պետական ծառայությունները: Եւ այդ ամենի հիման վրա կառուցում ենք թե՛ ֆինանսական, թե՛ ոչ ֆինանսական ծառայությունները: Ի դեպ, ոչ ֆինանսական ծառայությունները նախընտրում ենք փնտրել նաեւ տարբեր գործընկերների մոտ:

Եվ այդ ժամանակ հարթակը դառնում է էկոհամակարգ, քանի որ միավորում է տարբեր կազմակերպությունների ծառայություններ», - մանրամասնեց Արտյոմ Շամցյանը:

«Ամերիա բիզնես» հարթակի հաջորդ նորարարությունը կլինի ՍՊԸ-ն օլիայն գրանցելու հնարավորությունը: «Ամերիա-

բանկ»-ի մանրամասն բանկինգի տնօրեն Արման Բարսեղյանը նշեց, որ այս պահի դրությամբ «Ամերիաբանկ»-ի գործարքների ընդամենը 4 տոկոսն է մասնաճյուղերում իրականացվում: «Այսինքն՝ բանկին հաջողվել է գործարքների 96 տոկոսը բեռնաթափել, հանել մասնաճյուղերից, դրանք հիմնականում ինքնասպասարկվող եւ թվային ուղիներով են իրականացվում: Այդ ցուցանիշն ակնհայտորեն վկայում է թվայնացման տեմպերի մասին», - հավելեց նա:

«Ամերիա բիզնես» հարթակում իրականացված նորարարությունները դրական ազդեցություն են ունեցել բանկում մանրամասն բիզնես հաճախորդների ցուցանիշների վրա: Մասնավորապես, հաճախորդների քանակը վերջին 3 տարում կրկնապատկվել է, իսկ տարվա սկզբից աճել մոտ 55%-ով, վարկային պորտֆելը նույն ժամանակահատվածում կրկնապատկվել է, իսկ տարվա սկզբից աճել մոտ 28%-ով, օլիայն/Մոբայլ բանկինգ համակարգի օգտատերերի քանակը վերջին 3 տարում աճել է 3.5 անգամ, իսկ ընթացիկ տարվա 9 ամսում՝ 51%-ով: Նշեց նաեւ, որ ներկայումս «Ամերիաբանկ»-ի մանրամասն բիզնես վարկերի 73%-ը հաստատվում է օլիայն:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԴԱՐԱՇՐՋԱՆ

ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԴԱՍԸՆԹԱՑ

«Իրանական ձեռագրակազմերի վերականգնման» ճեպական եւ գործնական դասընթացի 2-րդ փուլի Երջանակում Մատենադարանի վերականգնողները յուրացրել են իրանական ձեռագրակազմերի, կարի, կաղապարների առանձնահատկությունները եւ դրանց վերականգնման նրբությունները: Գասընթացը, որը Ղաջարական դարաբանի ձեռագրակազմերին նվիրված ծրագրի բարոնակությունն է, անցկացվել է 2022-ի հոկտեմբերի 21-29-ը Մատենադարանում:

Հոկտեմբերի 27-ին լրագրողների հետ հանդիպմանը Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղետկյանը ընդգծեց, որ դասընթացի շրջանակում հյուրընկալել են Իրանից հատուկ հրավիրված անվանի վերականգնող Ջամիլ Մալեքյանին: «Յուրացնելով նրա փոխանցած հմտությունները՝ մեր մասնագետները դրանք կկիրառեն պրակտիկայում», - ասաց նա եւ հավելեց, որ Մատենադարանում պահվում է ավելի քան 450 իրանական ձեռագիր, որոնց մեծ մասի վերականգնման համար պետք է սերտել այդ մշակույթին, ձեռագրարվեստին հատուկ նրբությունները:

Տնօրենը հիշեցրեց, որ մի շարք նախաձեռնություններ են իրականացրել հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ, եւ վստահեցրեց, որ ձեռագրերի վերականգնմանը նվիրված ծրագիրը շարունակական կլինի:

Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյեդ Ռոսեյն Թաբաթաբային էլ շեշտեց, որ վերականգնման բաժնի լավագույն մասնագետին են ընտրել, իսկ Մատենադարանի բաժնի աշխատակիցները փաստում են դա՛ խոստելով երկու փուլով անցկացվող ծրագրի արդյունավետության մասին:

«Մենք լիահույս ենք, որ կկարողանանք այս ծրագիրն ամենամյա դարձնել, ինչի արդյունքում ոչ մի վնասված ձեռագիր չի մնա Մատենադարանում: Մի քանի օր առաջ Սյունքիում բացվեց Իրանի գլխավոր հյուրընկալությունը, որն էլ իր հերթին նոր էջ է բացում հայ-իրանական դիվանագիտական հարաբերությունների մեջ: Այն եւս կարող է խթանել երկու երկրների միջև տարատեսակ կրթամշակութային, գիտական կապերի զարգացմանը», - շեշտեց Սեյեդ Ռոսեյն Թաբաթաբային:



Մատենադարանի վերականգնման բաժնի ղեկավար Գայանե Էլիազյանի խոսքով՝ դասընթացը չափազանց հագեցած է եղել: «Մեր մասնագետները որոշ չափով տիրապետում են իրանական ձեռագրերի վերականգնման տեխնիկային, սակայն երբ մասնագետն է ամեն բան ցույց տալիս, մեր գիտելիքներն ավելի են ամրապնդվում: Մեզ համար Ջամիլ Մալեքյանը «մարդ-նվագախումբ է», որից կարելի է անընդհատ սովորել», - ասաց Էլիազյանը:

Ջամիլ Մալեքյանի համար Մատենադարանը մեծ բացահայտում է, եւ նա վատ է զգում, որ այն ըստ արժանվույն գնահատված չէ աշխարհում եւ բավարար ճանաչված չէ: «Մատենադարանը մեծ գանձ է տարածաշրջանում: Ես փորձել եմ աշխատանքների ընթացքը նկարել եւ փոքր ֆիլմով իմ լուսն ունենալ Մատենադարանն առավել ճանաչելի դարձնելու գործում», - ասաց վերականգնողը:

Նա շատ տպավորված է մեր մասնագետներով եւ կարծում է, որ նրանք շատ մեծ պատրաստվածություն ունեն եւ շատ պրոֆեսիոնալ են: Ըստ մասնագետների՝ նման դասընթացները շատ կարեւոր են Մատենադարանի հավաքածուի պահպանման համար, քանի որ Մատենադարանում պահվող այլաբան ձեռագրերն ունեն վերականգնման այլ ավանդույթներ: Ծրագիրն իրականացվում է Հայաստանում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի հետ համագործակցությամբ եւ Արա Փիլիպոսյանի օժանդակությամբ:

ԼՈՒՐԵՐ

«ԵՎՐԱՏԵՍԻԼԻ» ՄԱՍՆԱԿԻՑ



Երեւանում կայանալիք «Մանկական Եվրատեսիլ» երգի մրցույթում Հայաստանը կներկայացնի 14-ամյա Նարեն: Այս տարվա պատվիրակն ընտրվել է Նախապես հայտարարված բաց մրցույթի արդյունքում, որին 100-ից ավելի հայտ էր ստացվել Հայաստանից եւ տարբեր երկրներից:

Նարեն Նշում է, որ իր գլխավոր երգակնքը մեծ բեմում երգելն է, եւ այն արդեն իրականություն է դառնում: «Երգը, պարը իմ օրվա անբաժան մասն են: Ես մեծանում եմ՝ ոգեշնչվելով տաղանդավոր արտիստների ստեղծագործություններով:

Ինձ համար մեծ պատիվ է Հայաստանը ներկայացնել հեկց այս տարի, երբ մրցույթն իմ երկիրն է հյուրընկալում: Ուրախ եմ, որ հանդիպելու եմ տարբեր երկրներից երեխաների իմ հայրենիքում՝ նրանց ցույց տալով Հայաստանն իր ամբողջ գունապանակով»:

ՀԱՅՏՆԻ Է ՕՐԸ

Ամանորին ընդառաջ՝ Հանրապետության գլխավոր տոնածառը պատրաստ կլինի ղեկավարների սկզբին, իսկ լույսերի հանդիսավոր վառման արարողությանը ներկա կլինեն նաեւ «Մանկական Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթի մասնակիցները:

Հանրային հեռուստաընկերությունում հրավիրված ասուլիսում «Մանկական Եվրատեսիլ 2022» մրցույթի գործադիր պրոդյուսեր Դավիթ Շերունյանը նշեց, որ Հանրապետության հրապարակում տոնածառի լույսերի վառման պաշտոնական արարողությունը նախատեսված է դեկտեմբերի 5-ին:

«Համագործակցելով Երեւանի քաղաքապետարանի հետ՝ մրցույթին մասնակցող 16 երկրի ներկայացուցիչներին տալիս ենք այս մեծ հնարավորությունը, որպեսզի նրանք բոլորը միասին վառեն հանրապետության գլխավոր տոնածառի լույսերը: Դրանով կլինի թե՛ «Եվրատեսիլ»-ի բացման արարողության, թե՛ մեկշաբաթյա տոնախմբության մեկնարկը», - ասաց Դավիթ Շերունյանը:

«Մանկական Եվրատեսիլ»-ը տեղի կունենա Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում դեկտեմբերի 11-ին:

Ավելի վաղ Երեւանի քաղաքապետարանը հայտնել էր, որ այս տարի Ամանորի գլխավոր տոնածառը ավելի վաղ կվառվի՝ կապված Հայաստանում «Մանկական Եվրատեսիլ»-ի անցկացման եւ մեր երկիր այցելող հյուրերի հետ:

ԼՈՒՐԵՐ

Ո՞ՒՐ Է ԿՈՐԵԼ ՀՐԱՆՑ ԹՈՒՒՍՏՅԱՆԸ

ՀՀ ժողովրդական արհեստ, սիրված դերասան Հրանց Թոխաչյանը, որը, բացի ստեղծագործական գործունեությունից, ակտիվ մասնակցում էր երկրում կատարվող հասարակական-քաղաքական իրադարձություններին, վերջին Երջանակում այնքան էլ ակտիվ չէ:

ArmLur.am-ը արդեն տեսական ժամանակ է, ինչ փորձում է կապ հաստատել սիրված դերասանի հետ՝ պարզելու համար, թե ինչ գործունեություն է այժմ ծավալում եւ ինչու է լուռ Հրանց Թոխաչյանը հատկապես սեպտեմբերյան վերջին պատերազմից հետո, սակայն մեր զանգերն այդպես էլ մնացին անպատասխան:

Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմից հետո Հրանց Թոխաչյանը մի շարք մշակութային գործիչների հետ միասին ձեռնամուխ էր եղել կազմակերպել բողոքի ակցիաներ «Շառլ Ազնավուրի» հրապարակում, եւ, բացի այդ, պահանջում էին ազատ արձակել Ադրբեջանում պահվող հայ գերիներին:

ԼԻՂԱ ԵՐԻՍՏՅԱՆ



● Հոկտեմբերի 29-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի կունենա Հայկ Դավթյանի եւ Աննա Դավթյան-Շիրիկյանի համերգը: Տոմսերի արժեքը՝ 2500 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՌՈՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կասարվում օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակության որազումը:

Իննա Գալստյան (33 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմեր կիրառելիս դատարանը կամ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները եւ այլ մարմիններ այդ նորմերի բովանդակությունը պարզում են համապատասխան օտարերկրյա պետությունում՝ դրանց պաշտոնական մեկնաբանությանը եւ կիրառման պրակտիկային համապատասխան:

Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու նպատակով դատարանը, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները եւ այլ մարմիններ կարող են սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա իրավասու մարմիններ՝ համապատասխան պարզաբանում ստանալու համար, կամ ներգրավել փորձագետներին:

Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ներկայացնելու օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը հավաստող այն փաստաթղթերը, որոնց վրա նրանք հիմնվում են՝ իրենց պահանջներն ու առարկությունները հիմնավորելու համար, կամ, այլ կերպ, աջակցել դատարանին եւ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններին եւ այլ մարմիններին՝ օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու համար:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Եթե սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան ձեռնարկված միջոցներով ողջամիտ ժամկետներում չի պարզվում օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմի բովանդակությունը, ապա կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կասարվում դասական ծանուցումը:

Միսակ Աղաջանյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Դատական նիստին ներկա գտնվող դատավարության մասնակիցը հաջորդ դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին ծանուցվում է տվյալ դատական նիստում դատավորի կողմից հաղորդելու միջոցով: Եթե դատական նիստի արձանագրությունը վարվում է պարզ թղթային արձանագրման ձեռով, ապա հաջորդ դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին տեղեկացված լինելու վերաբերյալ դատավարության մասնակիցը արձանագրության մեջ նշում է եւ ստորագրում:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Կողմերի միջեւ կնքված պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կողմերը կարող են դատարանին միջնորդել, իսկ դատարանն իր նախաձեռնությամբ կարող է կիրառել պայմանագրով նախատեսված ծանուցման կարգը, եթե կնքված պայմանագրով ուղղակիորեն նախատեսված է նման հնարավորություն: Սույն դրույթը կիրառվում է նաեւ այն դեպքերում, երբ նման հնարավորություն նախատեսված է իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ արժեթղթեր թողարկողի ազդագրով: Սույն մասով նախատեսված ծանուցման կարգը չի կիրառվում բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է ծանուցման փաստը կամ ծանուցման կարգի վերաբերյալ համաձայնությունը:

ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը վերցված է համացանցից



Տրապիզոնի խմելու ջրի եւ կոյուղու վարչության (TISKI) խմբերի կողմից իրականացվող ենթակառուցվածքային աշխատանքների ընթացքում հայկական տապանաքար է հայտնաբերվել: Ermenihaber-ի փոխանցմամբ՝ տապանաքարը, ըստ ամենայնի, պատկանում է Մախոխյանների ընտանիքին: Գրեթե ամբողջությամբ ընթռնելի տապանաքարին գրված է. «Հանգստեան Թագուհիի կողակից Հովհաննես Մախոխյան, որ հանգեայ ի Տեր Հավիտեանն 1847թ.»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a checkbox for 'անվճար' (free of charge). Includes contact info: 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 28.10.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: